ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՄՍՀԴՅ-ԳՀԱՊՁԲ-2024/02 ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան 26.08.2024թ. ժամը 14.00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Ջանիբեկյան, Քրիստինե Գասպարյան, Նունե Ղարիբյան Հանձնաժողովի քարտուղար՝ Սիրարփի Բեկթաշյան

«ԳՄՍՀԴՅ-ԳՀԱՊՁԲ-2024/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ԳՄՍՀԴՅ-ԳՀԱՊՁԲ-2024/02 ծածկագրով «Սննդամթերքի» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրվել է Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Կարեն Դեմիրճյան 21 հասցեում

2. Նիստի օրակարգ՝

Մասնակի միակողմանի լուծել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Տարոն սուպերմարկետ» ՍՊԸ-ի միջև 05 օգոստոսի 2024թ. կնքված N ԳՄՍՀԴՅ-ԳՀԱՊՁԲ-2024/02-03 պայմանագիրը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Տարոն սուպերմարկետ» ՍՊԸ-ի միջև 05 օգոստոսի 2024թ. կնքված N ԳՄՍՀԴՅ-ԳՀԱՊՁԲ-2024/02-03 պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է 25.12.2024թ.:

Սակայն ընկերությունը հրաժարվում է կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես 12-րդ չափաբաժնով նախատեսված «հաց» ապրանքը մատակարարել՝ այդ մասին 22.08.2024թ. գրավոր տեղեկացնելով ՊՈԱԿ-ին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը մասնակի միակողմանի լուծել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Տարոն սուպերմարկետ» ՍՊԸ-ի միջև 05 օգոստոսի 2024թ. կնքված N ԳՄՍՀԴ3-ԳՀԱՊՁԲ-2024/02-03 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. «Տարոն սուպերմարկետ» ՍՊԸ-ին տալ 10 /տասը/ օրացուցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 166050 /մեկ հարյուր վաթսունվեց հազար հիսուն/ դրամ և պայմանագրի 110700 /մեկ հարյուր տասը հազար/ դրամ ապահովումների գումարները ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900168000074 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

3. Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Տարոն սուպերմարկետ» ՍՊԸ-ին կազմակերպության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կատարողի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կատարողի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Հովհաննիսյան

Անդամներ՝ Լուսինե Ջանիբեկյան

Քրիստինե Գասպարյան

Նունե Ղարիբյան

Քարտուղար՝ Սիրարփի Բեկթաշյան